Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Հ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՄ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ

# ԾԱՂԿԱՔԱՂ

## ԱՐՁԱԿ ԵՒ ՉԱՓԱԾՈՅ ԲԱՆԻՑ

### Ի ՊԻՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ՅՕՐԻՆԵԱՑ
Ի ԿԱՐԱՊԵՏԷ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

Գ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ծառն արմատով է ծառ.*
*Տունն հիմամբ է տուն.*

Ելեկտրաշարժ Տպարան Ս. Էջմիածնի
1920

[illegible]

491.99.02
Կ-75

[illegible] 1961 Թ.

# ԾԱՂԿԱՔԱՂ

## ԱՐՁԱԿ ԵՒ ՉԱՓԱԾՈՅ ԲԱՆԻՑ

### Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

[illegible]

Ի [illegible]

—:—

[illegible]

[illegible]

[illegible]

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

[illegible]

1930

A II / 13552

## Ա. ԳԱՐՈՒՆ.

Ձմեռն էանց. անձրևք անցին և գնացին մեկնեցան. ծաղիկք երևեցան յերկրի. ժամանակ յատանելոյ հասաւ. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում. թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր. այգիք մեր ծաղկեցան և տուին զհոտ իւրեանց.

## Բ. ՇԱՒՂՔ ԱՄԲԱՐՇՏԱՑ.

Որդեակ, մի խաբեսցեն զքեզ արք ամբարիշտք. Եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն. եկ ընդ մեզ. ծածկեսցուք յերկրի զայր արդար. բարձցուք զյիշատակ նորա յերկրէ, և զստացուածս նորա զպատուականս ընդ մեզ բաժանեսցուք. լցցուք զտունս մեր աւարաւ. Որդեակ, մի երթար ճանապարհ ընդ նոսա, զի ոտք նոցա ի չարիս ընթանան։

## Գ. ՄՇԱԿ ԱՅԳՒՈՅՆ.

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի. և ցանկով պատեաց զնա. և փորեաց ի նմա հնձան. և շինեաց աշտարակ. և ետ զնա մշակաց. և գնաց ի տար աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա. Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն. և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակք ասեն ընդ միմեանս, իբրև տեսին զորդին.

Սա է ժառանգն. եկայք, սպանցուք զդա, զի մեր լիցի ժառանգութիւնն: Եւ հանեալ զնա արտաքս քան զայգին և սպանին:

## Դ. ԵՐԳ ԳԱԾՏԱՆ.

Զինչ քաղցր մեզ չնախանձոյ.
Բայց նուագել զերգս դաշտաց.
Զարդս լերանց, դաշտիս փթթեալ,
Ըղձալանիս ստացական:

## Ե. ԳՕՏԻՓԻՆՔ ՏԵՂԱՆ.

Մի յօժարեսցես ընդ բազումս ի չարիս: Մի հաւանեսցես ընդ անիրաւի լինել վկայ անիրաւ. Յամենայն ի գործ բանէ ի բաց կացցես: և զարդարն և զանպարտն մի սպանանիցես. և զանօրէնն մի արդարացուսցես վասն կաշառաց:

## Զ. ԵՐԱԶ.

Տեսանէի ծառ մի ի մէջ երկրի. և բարձրութիւն նորա մինչև յերկինս. և լայնութիւն նորա ի ծագս ամենայն երկրի. տերև նորա գեղեցիկ. և պտուղ նորա բազում. ի ներքոյ նորա բնակեալ էին գազանք վայրի. և յոստս նորա հանգուցեալ էին թռչունք երկնից: Տեսանէի և ահա զուարթուն իջանէր յերկնից և ասէր. Հատէք զծառդ և քրջատեցէք զոստս դորա. թօթափեցէք զտերև դորա. և ցրուեցէք զպտուղ դորա:

## Է. ՏՐՏՄՈՒՆՔ.

Եղև երբեմն արտասուօք անցանել թէ. զամս ծննդեան մեր աշխատանօք. և տառապանօք ժամանակս կենաց. և մարմնի հիւ-

լեալ զպտուղն՝ տանուն ի մէնջ զփառաւորս մեր. Եկայք և այլ մի զարձցուք առ Աստուած, ի մի անձն ի նոցանէ, իմաստ-տունն առ. Ոչ է այդպէս. զի զաւեկարդն քան զայլա-ծննդոց մերոց, տանուն մարդիկ. և խնամեն մարդիկ զմեզ. և զծնունդս մեր. զի առնումք շատ, քան թէ տամք:

## Ը. ԽՄԱՍՏՈՒԹԻՒՆ.

Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն, զի լաւ է զնա վաճառել քան զգանձս ոսկւոյ և արծաթոյ. պատուականագոյն է քան զականս պատուականս. ամենայն ինչ պատուական չարժէ զնա, զի երկայն աւուրք և ամք կենաց ի յաջմէ նորա, և յահեկէ նորա՝ փառք և մեծութիւն. ի բերանոյ նորա ելանէ արդարութիւն. զօրէնս և զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ:

## Թ. ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐՆ.

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս. մին փարիսեցի և միւսն մաքսաւոր. Փարիսեցին կայր մեկուսի և զայս աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ, յափշտակօղս և զրկողս և շնացողս կամ իբրև զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս ի շաբաթու և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց: Եւ մաքսաւորն կայր մեկուսի և ոչ կամէր զաչսն ընդ երկինս համբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր և ասէր. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս: Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա, զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի:

## Ժ. ԽՐԱՏ.

Լուր, որդեակ, խրատու հօր քո, դարձո՛ զոտն քո ի մանկութենէ չարէ. խնդրեա իմաստութիւն անյագ և խնդրեա զքա-նեց ժամու պատանեկին քոյ. զի մի զղջանայցես յետոյ և ասի-ցես թէ, վա՛յ ինձ, ատեցի զխրատ, ոչ լսէի ձայնի խրատտուի իմոյ և ուսուցչի իմոյ ոչ դնէի զունկն իմ.

## ԺԱ. ԳԱՐՈՒՆ.

Լուծան կապանք սառնամանիք,
Պճնի երկիր զարդարանօք,
Հնչէ զեփիւռ օդ քաղցրալիր,
Արդ ազատեալ հաւք գեղգեղեն:
Լեռ ձոր, մանուկ, գործոն և ծիլ,
Տես լիք ի գործ հեշտ մեղուակ.
Համեստութիւն, զուարթիկ, ունիք,
Մինչ ծաղկես զմանկիշանս:

## ԺԲ. ՍԱՄԱՐԱՑԻՆ ՈՂՈՐՄԱԾ.

Այր մի յԵրուսաղեմէ իջանէր յԵրիքով. և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա և վէրս եդին, թողին կիսամահ և գնացին: Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս և Ղևտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես և զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ. և տեսեալ զնա գթացաւ. և մատուցեալ՝ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ և գինի. և և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի և դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր՝ ելեալ ելանելոց ան-դի, հանեալ ետ պանդոկապետին երկուս դահեկանս և

տան. Դուրսեան առաջ գնա. և զոր ինչ ծախեսցես ի գին, ի միասնական գարպասեան ի տուն հասուցից քեզ։

## ԺԳ. ԱՂՕԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Մի յապաղեր բարի առնել կարօտելոյն։ Սովորեալ ձե-ռնամբար լիցիս Տեառն, մի ասիցես թէ. ելից և երկրպագեցից և աղա-ղես առաջ Տեառն ոչ գիտես զինչ. մաղթեա ծնողացն քոց։ Մի նեղանիր բարեկամին քում չարիք, որ յեղեալ և չի ... գնալ իցէ ի քեզ։

## ԺԴ. ՈՐՈՋ ԱՂՔԱՏԻՆ.

Արք երկու էին ի քաղաքի միում, մինն մեծատուն և միւսն աղքատ։ Եւ մեծատանն էին հօտք և անդեայք բազում յոյժ։ Եւ աղքատին և ոչինչ, բայց որոջ մի փոքր. և որոջն սնուցանեալ էր ընդ որդիս նորա ի միասին, ի հացէ նորա ուտէր. և ի բաժակէ նորա ըմպէր. և ի ծոց նորա ննջէր. և էր նորա իբրև դուստր։ Եւ եկն ուղեւոր առ այրն մեծատուն, և խնայեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց և յանդեոց իւրոց. և էառ զորոջ աղքատին և արար առնն եկելոյ կերակուր։

## ԺԵ. ՊԱՏԳԱՄՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆՔ.

Խնդրեցէք և տացի ձեզ. հայցեցէք և գտջիք. բախեցէք և բացցի ձեզ։ Տուք փոխ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ։ Զամենայն զայրի և զորբ մի չարչարիցէք։ Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։

## ԺԶ. ԹԶԵՆԻՆ ԱՆՊՏՈՒՂ.

Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և

եկն խնդրել պտուղ ի նմա. և ոչ եգիտ. ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են, յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջս և ոչ գտանեմ. արդ կոտրեա զդա. ընդէ՞ր և զերկիրդ խափանէ: Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, թող զդա այս ամ ևս, մինչև շուրջ զնովաւ բրեցից և արկից աղբ. թերևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ հատցես զդա:

## ԺԷ. ՋԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Երթ ընդ մրջիւնս և նախանձեսջիր ընդ ճանապարհս նորա. յեր խնամատարութիւն են քանն զնա. զի նորա ոչ գոյ երկրագործութիւն և ոչ հարկահանք. և պատրաստէ յամառանոյ զկերակուր և բազում համբարս դնէ: Մինչև յերբ ասկեալ կաս, ով ծոյլ, կամ երբ ի քնոյ զարթիցես: Փոքր մի ննջեսցես, փոքր մի նստիցես, փոքր մի նիրհեսցես, փոքր մի համբուրեսցես զձեռս քո ի վերայ լանջաց քոց, ապա ախոյեան հասանիցէ քեզ իբրև զչար ճանապարհորդ աղքատութիւն, և կարօտութիւն իբրև զքաջ սուրհանդակ: Ապա եթէ անդանդաղ լինիցիս, եկեսցէ իբրև աղբիւր ամբարձ քո, և կարօտութիւն իբրև զայր մի չար խուսափեսցէ ի քէն:

## ԺԸ. ԱՌ ՄԵՂՈՒ.

Թէ, քաղցր ասեա, մեղո՛ւ գործօն,
Զի՞մ երեկեան մարդ ապագուն,
Արդ փո՞յթ աստա կայծեմ զարդիս,
Արտօսր անդ երբ ի հաճիս.

Մինչ դեռ այգս է եզական,
Մեղր ամբարես ի բոյն քնքուշ.
Ոչ մի՛ջս ցուրտն, ոչ մի՛ջս տօթն,
Ձմեռն գոյ քեզ սառնատամն

Փորձեամ, մեզմու, դու ինձ սնեալ,
Ի մէջք ի մեռ քրձին սաստ.
Զի ի Սաղիմ յարժան երկնայց,
Ի սուրբ տաճար նուէր աստղայց։

## ԺԲ. ՊԱՏԱՐԱԳՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ.

1. Փորձեաց Աստուած զԱբրահամ և ասէ ցնա. Աբրահամ, Աբրահամ. և նա ասէ. Ահաւասիկ եմ ես. ասէ ցնա. Առ դու զորդին քո սիրելի, զոր սիրեցեր, զԻսահակ և գնա դու յերկիրն բարձր. և հանցես զնա անդ յողջակէզ ի միում լերանց, յորում ասացից քեզ։

2. Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն. համետեաց զէշ իւր. և առ ընդ իւր երկուս ծառայս և զԻսահակ զորդի իւր. և պատառեաց փայտ յողջակէզս. և յարեաւ գնաց։ Եւ եկն ի տեղին, զոր ասաց նմա Աստուած. և յաւուրն երրորդի համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես զտեղին ի հեռաստանէ։ Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. Նստարուք դուք աստ հանդերձ իշովդ. և ես և պատանեակս երթիցուք մինչև ցանդր և երկիր պագցուք և դարձցուք առ ձեզ։

3. Եւ առ Աբրահամ զփայտ ողջակիզին. և եդ ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ. և առ ի ձեռն զհուրն և զսուրն. և գնացին երկոքեան ի միասին։ Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ հայր իւր. Հայր։ և նա ասէ. Զի՞ է, որդեակ. և նա ասէ. Ահա հուր և անդ փայտ. ուր է ոչխար յողջակէզ. և նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ, որդեակ։ Գնացին երկոքեան ի միասին, և եկին ի տեղին, զոր ասաց նմա Աստուած։ Անդ շինեաց սեղան Աբրահամ. և եդ ի փայտն, և կապեաց զԻսահակ զորդի իւր. եդ զնա ի սեղան ի վերայ փայտիցն. և ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զենուլ զորդին իւր։

4. Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ.

Աբրահամ, Աբրահամ. և նա ասէ. Ահաւասիկ եմ. և ասէ. Մի՛ մխեր զձեռն քո ի պատանեակդ և մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի, թէ երկիւղած ես դու յԱստուծոյ և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վասն իմ։ Համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ պեղջերացն։ Եւ գնաց Աբրահամ, առ զխոյն և եհան զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ։

Ի. ԲԱՆՔ ՓՐԿՉԻՆ.

Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց. օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս արարէք ի վերայ նեղչաց ձերոց։ Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա նմին չափով. որով չափէք, չափեսցի ձեզ։ Հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիւղ յականէ եղբօր քո։ Զի ինչ ծածուկ, որ ոչ յայտ լիցի. և գաղտնի, որ ոչ ծանիցի. Ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի։ Ոչ է մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում։ Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր։ Ոչ ի փշոց քաղեն թուզ և ոչ ի մորենւոյ կթեն խաղող։ Ի յաւելուածոյ սրտին խօսի բերան։ Ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։

ԻԱ. ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ.

1. Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիս իւր. և արար նմա պատմուճան ծաղկեայ։ Իբրև ետեսին եղբարքն նորա թէ, սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա. և ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ։ Եւ եսես երազ Յովսէփ. և պատմեաց եղբարցն իւրոց. և ասէ ցնոսա. «Լուարուք զերազս զոր տեսի. Թուէր ինձ, որպէս կապէաք ի դաշտի որայս. և կանգնեցաւ որայն իմ. եկաց ուղղորդ. և դարձան որայքն

ձեր և պագին երկիր իմում որայոյն։

2. Եւ ասեն ցնա եղբարքն իւր. «միթէ թագաւորելով թագաւորեսցես ի վերայ մեր, կամ տիրելով տիրեսցես մեզ»։ Եւ յաւելին եւս ատել զնա վասն երազոյն նորա և վասն բանիցն նորա։ Եւ ետես միւս եւս երազ. և պատմեաց հօր իւրում և եղբարց իւրոց. և ասէ. «Ահա տեսանէի միւս եւս երազ. որպէս թէ արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին ինձ»։ Սաստեաց նմա հայրն իւր և ասէ. «զինչ է երազդ զոր տեսեր. արդ եկեալ եկեսցուք ես և մայր քո և եղբարք քո և երկիր պագանիցեմք քեզ»։ Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր, բայց հայրն պահէր զբանսն։

3. Եւ գնացին եղբարքն նորա արածել զխաշինս հօրն իւրեանց։ Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. «ոչ ապաքէն եղբարքդ քո արածեն զխաշինսն. եկ առաքեցից զքեզ առ նոսա. երթ, տես եթէ ողջ իցեն եղբարքն քո և խաշինքն. և բեր ինձ զրոյց»։ Եւ առաքեաց զնա. տեսին զնա եղբարքն յառաջագոյն ի հեռաստանէ. և ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր. «Ահա երազատեսն գայ. եկայք սպանցուք զնա և ընկեսցուք ի մի ի գբոց աստի. և ասասցուք եթէ, գազան չար եկեր զնա. և տեսցուք զինչ լինիցին երազքն նորա»։

4. Եւ եղեւ իբրեւ եկն Յովսէփ առ եղբարսն իւր, մերկացին զպատմուճանն նորա ծաղկեայ ի նմանէ, և առին ընկեցին զնա ի գուբ մի, և նստան ուտել հաց։ Զաչս ի վեր բարձեալ տեսին, և ահա ճանապարհորդք գային, և ասէ Յուդա ցեղբարսն իւր. «զինչ օգուտ է, եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր, և թագուցանիցեմք զարիւն նորա. եկայք վաճառեսցուք զնա». և ձգեցին հանին զՅովսէփ ի գբոյ անտի և վաճառեցին զՅովսէփ քսան դահեկանի. և բերեցին զՅովսէփ յԵգիպտոս։

5. Եւ առեալ զպատմուճանն Յովսէփայ զենին ու այ-

ծեաց և թախթանեցին զպատմուճանն յարեան. և առաքե-
ցին զպատմուճանն ծաղկեայ առնել առ հայրն իւրեանց
և ասեն. «զայդ գտաք. ծանիր եթէ որդւոյ քո իցէ պատ-
մուճանդ»: Եւ ծանեաւ զնա և ասէ. «պատմուճանս որդւոյ
իմոյ է. գազան չար եկեր զնա, գազան յափշտակեաց
զՅովսէփ»: Եւ պատառեաց զհանդերձս իւր և քուրձ զգե-
ցաւ ի վերայ մէջաց իւրոց. և սուգ առնէր ի վերայ որդ-
ւոյն իւրոյ աւուրս բազումս:

## ԻԶ. ՍԵՄԱՆՈՀԱՆ.

Ահաւասիկ ել սերմանող սերմանել. եւ ի սերմանելն էր որ անկաւ առ ճանապարհաւ. եկին թռչունք և կերան զնա: Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին. և յարևու ծագելոյ արև, ջեռաւ. և զի ոչ գոյին արմատք, ցամաքեցաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. և ետուր աճեցեալ պտուղ պտուղ. և բերէր ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր:

## ԻԷ. ՈՒՆԾՅՆՁԻԹԵԻՆ.

Ծաղիկ գարուն քաղցր ի կանաչ.
Անձին տուտիք քաղցրաբերիկ.
Երգէ սոխակ զքերծն առաչ.
Յայտնել գոյն իւր ի գնաչ.

Փթթին և փարթք այգուն փարքով,
Զարմ ուրե առայ վէր պայծառով.
Բայց մինչև երբ զնան յառով.
Թռչնի և փոքր, թռչնի կանաչ:

Ամենայն ինչ ունի աւարտ,
Ժամանակաւ փնայ յաղթարտ,
Եւ քոյդ, անձն իմ, իցէ աւարտակար,
Ընդ նոյն անկեալ և քոյին քարտ

### ԻԴ. ԱՆԿՈՒՄՆ ԿՐՕՆԱՍԱՂՁՄԻ.

Զհրամն զատոր, նոցա մեծացեալ քաղաքն բարձրանա-
լով. և եղև իբրև այլք յեկեալ արտաքսեցաւ. Իշխան ա-
քաղենին եղև հովիւատու. Սուգ առին ծառայողք Աստե-
ամենայն դրանդ նորա եղեն յաղթանակելոյն. և բանա-
նալք նորա հողին և հառաչեն և յոգւոց եղանեն. Իսկ ամէ
նորա ի գերութիւն փախեաւն և եղեն գերիք նորա ի գլուխ
և թշնամիք նորա յաջողութիւն. Տղայք նորա փախեան
ի գերութիւն. Եհրացան քան զամենայն աւերք իւրեանց և
և ոչ որ ձայնաւէր գնաց. մեծեալ էր մարթ յաւէտս նորա.
բերեսցեն նորա և եղեն իբրև գեղջա շրջեսցեալ. Կերեան
իւրեանց գիտցին մանկանց ի ջերմ իւրեանց ի ծարաւոյ
իւրեանց. այսպէս գնաց ևնոցեկեն և ոչ ոք էր, որ բերէր
նոցա

### ԻԵ. ԳԱՆՈՒԻԿ ԾԱՂԿԱՐԿ.

1. Բաղդատեալ աղքատ արար ըմպելիս մեծամեծաց իւրեա-
նցն ընդ գինւոյ ծառաս, հրամայեաց բերել զաղաւս ար-
ծաթեայ և ոսկեղէն, զոր եհան Նաբուգոդոնոսոր հայրն նորա
ի տաճարէն, որ յԵրուսաղէմ, զի արբցեն նոքօք թագա-
ւորն և մեծամեծք իւր Հճարէքն նորա զինին և օրհնէին
զաստուածս ոսկեղէնս և արծաթս և պղնձիս և երկաթիս և փայ-
2. տեղէնս և քարեղէնս. Ի նմին ժամու ելին մատունք ձե-
ռին մարդոյ և գրէին հանդէպ ջահին ի վերայ բոլոր
որմոյ տաճարի թագաւորին Եւ թագաւորն տեսանէր
զթաթ ձեռինն, որ գրէր. Յայնժամ հատաւ գոյնք թա-

թագաւորին և խորհուրդք նորա խռովէին զնա և յօդք
միջոյ նորա լուծանէին և ծունկք նորա զմիմեանս բա-
3. խէին։ Եւ աղաղակեաց թագաւորն զօրութեամբ՝ ա-
ծել զմոգս և զքաղդէացիս և զգէտս։ Եւ ասէ ցիմաստունսն
Բաբելոնացւոց. Որ ընթերցցի զգիրդ զայս և մեկնութիւն
դորա ցուցցէ ինձ, ծիրանիս զգեցցի և մանեակ ոսկի ի
պարանոց իւր և երրորդ ի թագաւորութեան իմում իշ-
4. խեսցէ։ Եւ մտանէին ամենայն իմաստունք թագաւորին
և ոչ կարէին զգիրն ընթեռնուլ և ոչ զմեկնութիւն նորա
ցուցանել թագաւորին։ Եւ արքայ Բաղդասար խռովեցաւ
և գոյն երեսաց նորա շրջեցաւ. խռովեցան և մեծամեծք
5. նորա ընդ նմա։ Եւ եմուտ տիկինն ի տաճար ուրախու-
թեանն և ասէ. Արքայ, յաւիտեան կեաց. մի խռովեցու-
ցեն զքեզ խորհուրդք քո և գոյն երեսաց քոց մի եղծցի։
Զի է այր մի ի թագաւորութեան քում. և արքայ Նաբու-
գոդոնոսոր հայր քո կացոյց զնա ի վերայ գիտաց
և մոգուց և քաղդէացւոց և բժշկաց։ Մեկնէ երազս և պատ-
մէ զառակս և լուծանէ զկապս կապեալս — Դանիէլ. Եւ
արքայ Բաղդասար անուն եդ նմա։ Արդ կոչեսցի և զմեկ-
6. նութիւն դորա պատմեսցէ։ Յայնժամ ածին ի ներքս
զԴանիէլ առաջի թագաւորին։ Եւ ասէ թագաւորն ցԴա-
նիէլ. Լուայ զքէն եթէ հոգի Աստուծոյ է ի քեզ. և ա-
հաւասիկ մտին առաջի իմ իմաստունք և մոգք և քաղդէ-
ացիք զգիրդ զայդ ընթեռնուլ և զմեկնութիւն դորա
ցուցանել ինձ. և ոչ կարացին պատմել ինձ. Ես լուայ
զքէն եթէ կարող ես մեկնել մեկնութիւնս. և արդ եթէ
կարասցես զգիրդ ընթեռնուլ և զմեկնութիւն դորա ցուցա-
նել ինձ, ծիրանիս զգեցցիս և մանեակ ոսկի ի պարանոցի
7. քում և երրորդ թագաւորութեան իմում իշխեսցես։ Եւ
ասէ Դանիէլ առաջի թագաւորին. Պարգևք քո ընդ լիցին և
պատուէր տան քո այլում տուր. բայց զգիրդ ես ընթերցայց
և զմեկնութիւն դորա ցուցից քեզ։ Արքայ, Աստուած Բարձ-

րեալ զմեծութիւն և զթագաւորութիւն երկրաւոր. և զփա-
ռս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում. ամենայն ազգք և ա-
զինք և լեզուք պաշտօնէութեամբ դողային յերեսաց նորա. Զո-
րս կամէր, հարկանէր. զոր կամէր, սպանանէր. և զոր
կամէր ինքն, բարձրացուցանէր. և զոր կամէր ինքն,
Ց. խոնարհեցուցանէր. Եւ յորժամ բարձրացաւ սիրտ նորա,
մինչեւ յաղթեաց ամբարտաւանութեան խորհրդոց. և ապաւինեալ
բարձաւ ի նմանէ, մինչև ծանեաւ թէ տիրէ Բարձրեալն
թագաւորութեան մարդկան: Եւ արդ դու որդի նորա Բաղ-
դասար ընդդէմ Աստուծոյ երկնից հպարտացար. և զսր-
բութիւն տան նորա բերին առաջի քո. և դու և մեծամեծք
քո ըմպէիք նոքօք գինի. և զաստուածս. որ ոչ տե-
Ս. սանեն և ոչ լսեն և ոչ գիտեն, օրհնէիք: Այլ զԱստուած ոչ
՚նորին ամբարտաւանեցար. թաթ ձեռին և գրեաց գիր զայս:
Եւ այս ինչ է գիրն որ գրեալ է. Մանէ. Թեկէլ. Փարէս:
Եւ այս է մեկնութիւն բանին. Մանէ՝ չափեաց Աստուած
զթագաւորութիւն քո. Թեկէլ՝ կշռեցաւ ի կշիռ և գտաւ
պակասեալ. Փարէս՝ բաժանեցաւ թագաւորութիւն քո և
տուաւ Մարաց և Պարսից:

## ԻԶ. ՄՐՋԻՒՆ Ի ՓՈՒԲՈՒՆՑ.

Ծարաւի մրջիւն առ ջուր փութայր. և յանկուցեալ ծփայր ի ա-
լիսն. և ծառի մերձ մրջիւնն տապալէր, երբեմն առ աղբերակն
և ջուրն և ծածկեր և յափշտակեաց և քարշէր և առ ինքեան տանէր
և աղաւնի օգնել խնդրէր աղաղակելով. յանկարծ. նայեցաւ
աղաւնի և գտեալ շիւղ մի, և նետեաց առաջի նորա. և նո-
րա ելեալ ի ցամաք կեցաւ. և ի յետոյ ժամանակի
որսորդ զաղաւնին բռնել կամէր. և նշմարեալ մրջիւնն
խայթեաց զոտն որսորդին. և նա թողեալ փախեաւ, և ա-
զատի ի նորա ձեռաց նենգութենէ.

———

## ԺԷ. ԱՄԱՌ.

Հասկահատ լինի դաշտն,
Ծառք պտղաբերեալ ի յառաջ.
Հնձողք, որ մօտ շնչէ զով
Տերեւկայս ի բացեաց.

Սաղարթախիտ ծառերաց ծայրք
Տատանին մեղմ ի զեփիւռ,
Եւ ծածանին պաշտպանեալք,
Ի չէկ ցորեան հասկովքն:

## ԺԸ. ԲՈՒ ԵՒ ԱՐԾԻՒ.

Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ եւ խնդրեաց զզաւակացն նորա հարսն առնել. զի առանձինն գեղեցկագոյնք են եւ են գեղեցիկք. պատասխանի ի խոստումն, եւ յետ կատարման հարսանեաց յանձն առ առաւօտ. Եւ ի լինել հարսանեացն ի տուն, յայս ոչ կարէր առաւօտեայ ժամայն. եւ ծառք առնէին զառաւօտս. եւ յերեկս եկն զերծեալ եւ ոչ հարսն եւս, յանձինս եւ ոնց աղջամղջեն. եւ վասն այսորիկ վա-ճառ լուծան հարսանիքն:

Զմիտս խոր առակս նմանեցուցանէ մեծագէտն, որ զգա-ւակս իւրեանց գեղեցկութիւն առնն ալլասեռեալ. ասացի եւ ոչ է միաբանութիւն:

## ԺԹ. ՈՒԽՏ ՅԵՓԹԱՅԵԱՅ.

1. Եւ ուխտեաց Յեփթայէ ուխտ Տեառն եւ ասէ. Եթէ մատնելով մատնեսցես զորդիսն Ամոնայ ի ձեռս իմ, եւ եղիցի, որ ելանելով ելանիցէ ի դրանց տան իմոյ ընդառաջ իմ ի դառնալն իմում խաղաղութեամբ յորդւոցն Ամոնայ, եղիցի նա Տեառն, եւ մատուցից զնա Տեառն յողջակէզ: Եւ անց Յեփթայէ առ որդիսն Ամոնայ պատերազմել ընդ նոսա. եւ մատնեաց զնո-

տր ծէգ ի ձեռս նորա. և եհար զնոսա հարուածս մեծա-
մեծս յոյժ. և զամենայն որդիսն Անտիոքայ քերծեալ որդւոց
հայրենեացն։

2. Եւ եկն Թեփղիայէ ի տուն իւր. և անա դռնապան
իւր եղանէր ընդ առաջ նորա թմբկօք և պարուք. և նա էր
մխիթար սիրելի նորա. և ոչ դողը նորա լինէր ի նմանէ ուրախ
կամ զուարթ. Եւ եղև իբրև եսես զնա, պատասխանի զնա-
դեցեալ իւր և ասէ. Վայ է ինձ, դուստր իմ. ընկեցեր
զիս. խորհրդականին եղեր ինձ, զի ես բացի զբերանս իմ զատ-
չու առ Տէր. և ոչ կարացից դարձուցանել. Եւ ասէ ցնա.
Եթէ վասն իմ բացեր զբերան քո առ Տէր, արա զիս, որ-
պէս ել ի բերանոյ քումմէ. փոխանակ զի արար քեզ Տէր
վրէժխնդրութիւն ի թշնամեաց քոց։

3. Եւ ասէ ցհայր իւր. Արա ինձ զբանս զայս. թող զա-
յս ինձ երկու ամիսս և երթայց շրջեցայց ընդ լերինս և
լացից զկուսութիւնս իմ. — ես և ընկերք իմ. Եւ ասէ ցնա.
Երթ. և արձակեաց զնա երկուս ամիսս. և չոգաւ ինքն
և ընկերք իւր և լայց զկուսութիւն իւր ի վերայ լերանց.
Եւ եղև յետ կատարելոյ երկուց ամսոցն՝ դարձաւ առ հայր
իւր. և արար նմա զուխտն, զոր ուխտեաց։

## Է. ԽՈՍՏՈՎԱՆ ԱՆԴԱՆԻԿ.

1. Նեմանեայի արքայութեան երկրորդ ամսոյն կատարմանց
երեք առանց դատաստանաց խաչեալոց՝ եկին ընդդատալ զհարսանիս
և հարսին Հռիփսիմէ ի նոցանէ, կնճռոյք էին և հինգն իշխա-
նացն. Յիմաստիւն ասեին դատաւորացն և ձէթ ընդ հաշտու
ոչ գտանելոյ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ
լապտերս իւրեանց. Եւ ի յամել փեսային. նիրհեցին ամե-
նեքեան և ի քուն մտին։

2. Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ. Ահա փեսայ գայ,
ելէք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան ամենայն կոյս-

տանքն և կազմեցին պատարագս խոյսանաց։ Աւելին յետոյքն գիտնականաց Տէրը մեզ յիշողութ. ձևացե, զի մեզ չենք թագաւորքս մեր։ Պատմութեան ժամուն խնամատարն և տանն. Փոխէ ոչ խելէ մեզ և ձեզ բարեկամն, այլ եղբայր ի վաճառականս և գիւղացիք ձեզ։

3. Երբեմ նորա վաստկին զնէր, եկին ժեռաւյն և պատերազմն ժամին բնզ նոա ի նորաստեղծ. և փոխեցաւ զուամին ձեռնը զան և այլ կառուցքն և տուն. Տէր Տէր, բազմեզ. նա պատասխանէ են և տէ. Ամէն տուեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։

## ԼԱ. ԲԱՆՔ ՆԱՒԻՆ ԽՈՍՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Ինչպէս պէտք է առնել վասն բարեկամաց. և ոչ բարեկամ վասն յետոյ։ Յանկարծակի մի առնուր բարեկամ, զի մի և դու անկցիս կորուստ։ Ոչ կարես բարեկամ ճանաչել առանց, մինչև փորձ ոչ հաստատեսցես. Որք եղբայր անցին և միշտ խոյզնեն, նախանձ են, այլ գիտելով, անդատաստան խօսելով զօրաւոր կարծեն։ Յանդիման բարձեալ հասեալ զանն զաւակեալ եէ. յորդ խորհրդակցութեանց լինել ոչ առաւել, խրատն լինել մի համարձակիլ։ Ձեռքն մուն ոչ կարասեմ, այլ անհամբաւ կեանք ոչ է որպէս ընտանեաց և ի մեծամեծ քաղաքաց լինին, այլ որ մեծ ի քաղաքաց եղանիցեն։ Ձայն համարձակեալ լինել առնել մի առնիցեն, զան զէ ի չկարելի ծառայք լինիցին։ Լաւ է լռել քան անօրէն խօսք խօսել։ Ելից մի խնամակալ լաւ է, քան և ոչ ծառայս անողորմ ի մերոց շարժմանց սրտին ի մերոց կեղծաւորաց մտաւոր ժողովոյ մերոյն պղծեալ է։ Ախտն լինի առ ծնողս զաւակն կամին լինել առ ինքն ծագումն բազ Աստուծոյ հաւ մեծագործն ծառայութ ձեզ, զոր ի մեծագործութեան վասն բարեկամաց յարգանաց բազ։ Նոյ սրտին մի ծնծղայեալն, զի մի յետոյ խօսցին զնասս։

## ԼԹ. ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ։

1. Եւ տային նմա ըմպել գինի ընդ լեղւոյ խառնեալ։ Եւ իբ-
րև ճաշակեաց, ոչ կամէր ըմպել։ Եւ հանեալ զնա ի խաչ,
բաժանեցին զհանդերձս նորա վիճակս. զի լցցի բանն
որ ասացաւ ի մարգարէէն. Բաժանեցին զհանդերձս իմ
յինքեանս, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկա-
նէին։ Եւ նստեալ պահէին զնա։ Եւ եդին ի վերայ գլխոյ
նորա գրեալ զվնաս նորա, թէ՝ Սա է Յիսուս թագա-
2. ւոր Հրէից։ Յայնժամ հանեն ընդ նմա ի խաչ երկուս
աւազակս, մի յաջմէ և մի յահեկէ։ Եւ որ անցանէին հայ-
հոյէին զնա, շարժէին զգլուխս իւրեանց և ասէին. Վա՜հ
որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր զնա.
ապրեցո՛ զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։
Նոյնպէս և քահանայապետքն ծաղր առնէին դպրօքն
և ասէին. Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցա-
նել. եթէ թագաւոր է Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէդ և հա-
ւատասցուք դմա։ Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ
այժմ զդա, եթէ կամի զդա, քանզի ասաց, եթէ Աստու-
3. ծոյ որդի եմ։ Զնոյն և աւազակքն, որ խաչեալ էին ընդ
նմա, նախատէին զնա։ Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար
եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամն։ Եւ զինն
ժամուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ. Էլի Էլի
լամա սաբաքթանի. այսինքն է, Աստուած իմ, Աստուած
իմ, ընդէր թողեր զիս։ Ոմանք յայնցանէ, որ անդէն կա-
յին, իբրև լուան, ասէին. յԵղիա կարդայ դա։ Եւ վաղ-
վաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ լի քա-
ցախով, հարեալ յեղեգան՝ եւ ըմպէր նմա։ Եւ կէսքն
4. ասէին, թո՛ղ տեսցուք, եթէ գայ Եղիա փրկել զդա։ Եւ
Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ և արձակեաց
զհոգին։ Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս
ի վերուստ մինչև ի վայր. և երկիր շարժեցաւ. և վէմք

պատառեցան. և գերեզմանք բացան. և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. և ելեալ ի գերեզմանաց յետ յարութեան նորա մտին ի քաղաքն սուրբ և երևեցան բազմաց: Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժումն և զեղեալսն, երկեան յոյժ և ասեն. Արդարև Աստուծոյ որդի էր սա:

## ԼԳ. Ի ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ.

Մատնուեցաւ Տէրն ի խաչին որպէս զմարդ,
Այն, որ արար զերկինքն ձեռք գեղեցիկ.
Մահապարտացն՝ ջուր խնդրելով աղբիւրն Տէրն,
Այն, որ արբոյց ուխտեղեաց դարմանութիւն:

Լեղի խառնեալ ընդ քացախոյ ըմպեցուցին
Թքանեցանէր այն Երկնաւոր Թագաւորին.
Արեգակն խաւար զգեցաւ միջօրէին,
Համարեցաւ ընդ անօրէնս Անմահ Բանին:

Բարձրագոյն ձայնիւ կոչէր Տէրն ի խաչին
Զէլի էլին, և աւանդէր առ Հայր զհոգին.
Եւ վարագոյր հին որմնոյն սուրբ տաճարին
Ընդ չարչարանս Կենարարին պատառէին:

Երկիր հիմամբ ի յանդնդոց սասանէին,
Վէմք պատառէին և գերեզմանք բանային.
Ննջեալք յարեան սասանեցան՝ բանան անդնդին.
Եւ արձակեաց զկապեալ հոգիսն, որ անդ էին:

## ԼԴ. ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ.

Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի լեառն Ձիթենեաց. գնացին զհետ նորա և աշակերտքն: Իբրև եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա. «Արթուն կացէք չմտանել ի փորձութիւն»:

Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի. եդ
ծունր, կայր յաղօթս և ասէր. «Հայր, եթէ կամիս, ան-
ցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամքս, այլ քոյդ
2. լիցին»: Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից և զօրացու-
ցանէր զնա. և էր ի տագնապի և ժրագունութեամբ եւս
կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրև թրոմ-
բս արեան որ ոստան հեղեալ յերկիր: Եւ յարուցեալ
յաղօթիցն եկն առ աշակերտսն և եգիտ զնոսա ի քուն ի
3. տրտմութենէն: Եւ ասէ ցնոսա. «Զի՞ ննջէք, արիք, կա-
ցէք յաղօթս, զի մի մտանիցէք ի փորձութիւն»: Եւ մինչ-
դեռ խօսէր, անա ամբոխ և որ կոչէրն Յուդա՝ մի
յերկոտասանիցն առաջնորդէր նոցա: Եւ իբրև մերձեցաւ
առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ
էր նոցա. Թէ, զոր ես համբուրեցից, նա է. զնա
4. ունիջիք: Եւ ասէ ցնա Յիսուս. «Յուդա, համբուրելով մատ-
նես զորդի մարդոյ»: Իբրև տեսին, որ շուրջ էին, որ
ինչ լինելոց, ասեն ցնա. «Տէր, հարցո՞ւք զնոսա սրով»: Եւ
եհար մի ոմն ի նոցանէ զքահանայապետին ծառայ և ի
բաց եհատ զաջոյ ունկն նորա: Պատասխանի ետ Յիսուս
և ասէ. «Թոյլ տուք մինչև ցայդ վայր»: Եւ մատուցեալ
յունկն բժշկեաց զնա: Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա՝
զքահանայապետսն և զիշխանսն տաճարին և զծերսն.
«Իբրև ի վերայ աւազակի՞ ելէք սրովք և բրօք. հա-
նապազ ընդ ձեզ էի ի տաճարին և ոչ ձգեցէք ձեռս յիս.
այլ այս է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի»: Եւ կալ-
եալ զնա ածին և մուծին ի տուն քահանայապետին:

## Լ. ՄԱԹԱՅՆ ՉՈՐ.

1. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կա-
մեցաւ համար առնել ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրև
սկսաւ առնել, մատուցան առ նա պարտապան մի բիւր

քանքարայ: Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա
վաճառել տէրն նորա և զկին նորա և զորդիս և զամե-
նայն, որ ինչ և ունիցի, և հատուցանել: Եւ անկեալ
ծառայն երկիրպագանէր նմա և ասէր. Երկայնամիտ լեր
2. առ իս և զամենայն հատուցից քեզ: Գթացեալ տէրն ծա-
ռային այնորիկ՝ արձակեաց զնա և զփոխն եթող նմա:
Եւ ելեալ ծառայն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ
պարտ էր նմա հարիւր դահեկան, և կալեալ զնա խեղդէր
և ասէր. Հատո ինձ զոր պարտիս: Արդ անկեալ ծառա-
յակիցն առ ոտս նորա, աղաչէր և ասէր. Երկայնամիտ
լեր առ իս և հատուցից քեզ: Եւ նա ոչ կամէր. այլ չո-
3. գաւ արկ զնա ի բանտ, մինչև հատուսցէ զպարտսն: Իբրև
տեսին ծառայակիցքն նորա, որ ինչ եղեն, տրտմեցան
յոյժ, և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն, որ
ինչ եղեն: Յայնժամ կոչեաց զնա տէրն և ասէ. Ծառայ
չար, զամենայն զպարտսն թողի քեզ, քանզի աղաչե-
ցեր զիս. իսկ արդ ոչ էր պարտ քեզ ողորմել ծառա-
յակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ: Եւ բարկացեալ
տէրն նորա, մատնեաց զնա դահճաց, մինչև հատուսցէ
զամենայն զպարտսն:

## ԼԹ. ՁՄԵՌՆ

Ի սիւք ցրտագին
Արդ զափայ բնութիւն,
Ծաղկի զլուխ լերին
Յաօրաքաղաք ձիւն:

Ո՞ւր են թերթք վարդի
Յաղթողք ծիրանւոյ.
Ո՞ւր ոսկեծղի
Լիութիւն անդոյ:

Ոչ ճեղափին կարկաջ
Ի մարմանդ դաշտի,
Ոչ երգ քաղցրահունչ
Յոստախիտս դաշտի:

Ո՞ւր թռչոց պարիկ
Երգաձայն սոխակ
Մեղ ի պար լռիկ
Պշնչել իւր նուագ:

## ԼԷ. ՄԱՀ ԳՈՂԻԱԹՈՒ.

1. Եւ ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ ընդ Սաւուղ. և արք Իսրայէլի ժողովեցան ի հովիտն և ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն։ Եւ այլազգիքն կային ի վերայ լերինն յայսմ կողմանէ, և Իսրայէլ կայր ի վերայ լերինն յայնմ կողմանէ, և հովիտն ի մէջ նոցա։

2. Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն. Գողիաթ անուն նորա. բարձրութիւն նորա վեց կանգուն և թզաւ. և սաղաւարտ ի գլուխ նորա. և զրահս ձերառ զգեցեալ. և սռնապանս պղնձիս ի վերայ բարձից նորա, և վահան պղնձի ի վերայ թիկանց նորա. և բուն գեղարդեան նորա իբրև զաղբի ոստայնանկաց. և զինակիր նորա առաջի նորա երթայր։

3. Եկն եկաց. ձայն ետ ի ճակատն Իսրայէլի և ասէ ցնոսա. ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր. ոչ ապաքէն ես այլազգի եմ և դուք եբրայեցիք ծառայք Սաւուղայ. ընտրեցէք դուք ձեզ այր մի և իջցէ առ իս. եթէ կարասցէ կռուել ընդ իս և հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից և հարից զնա, եղիջիք դուք մեզ ի ծառայս և ծառայեսջիք մեզ։

Իբրև լուաւ Սաւուղ և ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն, զահի հարան և երկեան յոյժ։

4. Եւ էր այր մի ի Բեթղեհեմէ, և անուն նորա Յեսսէ. և էին նորա որդիք ութ. և գնացին երեք որդիքն Յեսսեայ մեծագոյնք զհետ Սաւուղայ ի պատերազմ. և Դաւիթ էր կրսերն. և ասէ Յեսսէ ցԴաւիթ որդի իւր. առ դու եղբարց քոց զարդու փոխինդոյ զայսոսիկ և զտասն նկանակս զայսոսիկ և ընթեր ի բանակն և տուր եղբարց քոց. և զտասն մածուցիկս կաթին տարցես հազարապետին.

և տեսցես զողջոյն եղբարցդ քո. և եթէ պէտք ինչ իցեն նոցա, իմասցիս։

5. Եւ հանդերձեալ Դաւիթ ընդ առաւօտն և եթող զոչխարսն ի պահապանութեան. և եկն ի կառավարսն և ի զօրն. և եթող Դաւիթ զկարասին յինքենէ ի ձեռն պահապանին և ընթացաւ ի ճակատն. և եկն եհարց զողջունէ եղբարցն իւրոց. և մինչդեռ նա խօսէր, ահա Գողիաթ խօսեցաւ ըստ նմին բանից. և լուաւ Դաւիթ. Եւ խօսեցաւ Դաւիթ ընդ արսն, որ շուրջ կային զնովաւ և ասէ. զինչ առնիցի արքայ առնն, որ հարկանիցէ զայլազգին զայն և բառնայցէ զնախատինս յԻսրայէլէ։

6. Եւ յայտ եղեն բանքն, զոր խօսեցաւ Դաւիթ. և պատմեցին առաջի Սաւուղայ. և առ զնա առ ինքն։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. մի՛ անկցի սիրտ տեառն իմոյ ի վերայ իւր. ծառայ քո երթիցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն այնմիկ։ Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. ոչ կարասցես երթալ կռուել ընդ այլազգւոյն. զի դու մանուկ ես և նա այր պատերազմող ի մանկութենէ իւրմէ։

7. Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. հովուէր ծառայ քո զխաշինս հօր իւրոյ, և յորժամ գայր առիւծ կամ արջ և առնոյր ոչխար ի հօտէ անտի, ելանէի զհետ նորա և հարկանէի զնա և կորզէի ի բերանոյ նորա. և եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա և հարկանէի և սպանանէի զնա։ Զառիւծ և զարջ սատակէր ծառայ քո և եղիցի այլազգին իբրև զմի ի նոցանէ. և արդ ոչ երթայց սատակեցից զնա և բարձից այսօր զնախատինս յԻսրայէլէ։ Տէր Աստուած, որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն և ի ձեռաց արջոյն, նոյն ապրեսցէ զիս ի ձեռաց այլազգւոյն այնորիկ։ Եւ ասէ Սաւուղ. երթ և Տէր եղիցի ընդ քեզ։

8. Եւ զգեցոյց Սաւուղ Դաւթի զհանդերձս իւր և սաղաւարտ պղնձի ի գլուխ նորա, և զգեցոյց նմա զրահս, և

առ Դաւիթ զսուսեր իւր ընդ մէջ ի վերայ վառապանակացն. և զենեաց ի գնալն միանգամ և երկիցս. և ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ոչ կարեմ երթալ սոքօք, զի չեմ հմուտ. և հանին զայն ի նմանէ. Եւ առ զցուպն իւր ի ձեռին իւրում և ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս ի հեղեղատէն. և եդ զնոսա ի հովուական մախաղին, յոր սովոր էր դնել կաթողէլ, և զպարսատիկն ի ձեռին իւրում. և մերձեցաւ առ այրն այլազգի։ Եւ գնայր գայր այլազգին և մերձենայր առ Դաւիթ. և այր վահանակիր առաջի նորա։

9. Իբրև հայեցաւ այլազգին և ետես զԴաւիթ, արհամարհեաց զնա. զի էր պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ։ Եւ այլազգին. «զի՞նչ, շո՞ւն եմ ես, զի ցուպով և քարամբք գաս ի վերայ իմ»։ Եւ ասէ Դաւիթ. «Ոչ, այլ վատթար ևս քան զշուն»։ Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. «Եկ առիս և տաց զմարմինս քո թռչնոց երկնից և գազանաց երկրի»։

10. Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. «Դու գաս ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ. և ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց. և փակեսցէ զքեզ Տէր այսօր ի ձեռս իմ և սպանից զքեզ և առից զգլուխ քո ի քէն. և տաց զդիակ քո և զդիակունս բանակին այլազգեաց յաւուր յայսմիկ թռչնոց երկնից և գազանաց երկրի. և ծանիցէ ամենայն երկիր թէ գոյ Աստուած ի մէջ Իսրայէլի»։

11. Եւ յարեաւ այլազգին և եկն և մերձեցաւ ընդդէմ Դաւթի. և ձգեաց Դաւիթ զձեռն իւր ի մախաղն և առ անտի քար մի և պարսաքարեաց և եհար զճակատ այլազգւոյն. և եմուտ սաղաւարտն ի ճակատն, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Եւ ընթացաւ Դաւիթ և հասաւ ի վերայ նորա, և առ զնորին սուսեր և մերկեաց զնա ի պատենից իւրոց և սպան զնա և եհատ զգլուխ նորա։

## Ա. ՄԱՀ ՍԱՒՈՒՂԱՅ

1. Եւ եղեւ յետ մահուանն Սաւուղայ, դարձաւ Դաւիթ ի
հարկանելոյ զԱմաղէկ. և նստաւ Դաւիթ աւուրս երկուս։
Եւ եղև յետ աւուրն երրորդի և ահա այր եկն ի բա-
նակէ զօրուն Սաւուղայ. և հանդերձք իւր պատառեալք
և հող գլխով իւրով. և եղև մտանել նորա առ Դաւիթ.
անկաւ և երկիր եպագ նմա. և ասէ ցնա Դաւիթ. Զի՞նչ
2. գործ է, պատմեա ինձ։ Եւ ասէ. Փախեաւ ժողովուրդն
ի պատերազմէն. և անկան բազումք ի ժողովրդենէն և
մեռան. և Սաւուղ և Յովնաթան մեռան։ Եւ ասէ Դաւիթ
ցպատանեակն, որ պատմեաց նմա. Զիա՞րդ գիտես եթէ, մեռաւ
Սաւուղ և Յովնաթան որդի նորա։ Եւ ասէ պատանին,
որ պատմեաց նմա. Դիպելով դիպեցայ ի լերինն. և ահա
Սաւուղ յեցեալ կայր ի նիզակն իւր. և ահա կառք և ա-
խոյեանք հեծելոց գումարեցան ի նա. և հայեցաւ ի թի-
կունս իւր և ետես զիս. և կոչեաց զիս. և ասեմ. Ահա-
ւասիկ. և ասէ ցիս. Ո՞վ ես դու. և ասեմ. Ամաղեկացի եմ
ես. և ասէ ցիս. Արի ի վերայ իմ և սպան զիս. զի կա-
լաւ զիս մահ անհնարին։ Եւ յարեայ ի վերայ նորա և
սպանի զնա. և առի զթագն ի գլխոյ նորա և զապարան-
ջանն ի բազկէ նորա և բերի զնոսա առ տէրն իմ այ-
4. սրը։ Եւ բուռն եհար Դաւիթ զհանդերձից իւրոց և
պատառեաց զնոսա. և ամենայն արք որ ընդ նմա պա-
տառեցին զհանդերձս իւրեանց և կոծեցան և լացին
և լացին մինչև ցերեկոյս ի վերայ Սաւուղայ և Յովնա-
թանու որդւոյ նորա և ի վերայ տանն Իսրայէլի, զի
հարան սրով։ Եւ ասէ Դաւիթ ցպատանեակն, որ պատմեաց
նմա. Ուստի՞ ես դու. և ասէ։ Որդի առն պանդխտի եմ
ես։ Եւ ասէ ցնա Դաւիթ. զիա՞րդ ոչ երկեար ձգել զձեռն
5. քո ապականել զօծեալն Տեառն։ Եւ կոչեաց Դաւիթ

զմի ի մանկանցն և ասէ. Մատիր և պատահեա սմա. և եհար զնա և մեռաւ. և ասէ ցնա Դաւիթ. Արիւն քո ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ զքէն և ասէ թէ, ես սպանի զօծեալն Տեառն. Եւ ողբաց Դաւիթ զողբս ի վերայ Սաւուղայ և ի վերայ Յովնաթանու որդւոյ նորա:

## Ժ. ՀՐԱՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ.

Զիշխանս ժողովրդեան մի հայհոյեսցես: Որ հարկանէ զհայր իւր և զմայր իւր մահու մեռցի: Որ բամբասիցէ զհայր իւր կամ զմայր իւր մահու մեռցի: Համբաւ սուտ մի ընդունիցիս: Եթէ լսելով լուիցես ձայնի իմում և արասցես զամենայն, զոր ինչ ասացի քեզ, եղէց թշնամի թշնամեաց քոց և հակառակ կացից հակառակորդաց քոց:

## ԺԱ. ՕՐՀՆԵՑԷՔ ՄԱՆԿՈՒՆՔ ԶՏԷՐ.

Ի հոմիլոս զատկականի.

Տուք ձեռն ի ձեռն հոգւով մանկունք
Համբերք ի պայծառ կարգաւն ծաղկունք.
Գեղեցկազարդն տօնեալ տօնիս
Ահա հասեալ է մեզ մօտիս.
Զաստուածայինն տօնս տօնեցէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր:

Տեսէք զեղբարս, մի՛, զի պայծառ
Ո՜չ զի չընդդաց երկրին խոտոյր,
Լուսացնցեալ ովք թափանցիկք
Թափին թիւրերը երկնաբացիկք.
Զաստուածայինն տօնս տօնեցէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր:

Եկայք ընծայք ի գաւթս հովիտ
Ձեռնով ի մայրս ծաղկանոցիս,
Բուրդս և մայրիս եւ գալարքէք
Փետուր և սառուցիս խաղացէք.
Զաստուածայինն տօնս տօնեցէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր:

Անցեալ կապերս կամաւորական
Անձայ ազատ առ հասարակ,
Եւ երփներանգ անկեալ հարթ
Ի բիւրաբիւր ծաղկանց ծոցոյ.
Զաստուածային սուրբ աւետիք ձեզ
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր.

      Ցնծէ՛ք քամի՛ բիւրք են ծաղկանց,
      Փամփ երամք, ձեր գերազանց.
      Զի անուշակ հոտս նրբին
      Զոր ի հեռուստ քիմք մեր առբին.
      Զաստուածային սուրբ աւետիք ձեզ
      Եւ օրհնեցէք մանկունք զՏէր.

Հոծացարուք ի թիթեռնիկ
Հեղաթռիչ ծաղկէ ծաղիկ,
Որոց նման և խնդոն ակերն
Թագկաթեալ յարգեաց մէջ.
Զաստուածային սուրբ աւետիք ձեզ
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր.

      Լուսնկայք գերդ ծիծռանց բիւր
      Ի հորդառոյ հասեալ մեզ հետ,
      Ի ծայր ծառոց երգեալ քաղցիկ
      Եւ գեղաձայնս թռչնակին.
      Զաստուածային սուրբ աւետիք ձեզ
      Եւ օրհնեցէք մանկունք զՏէր.

Եկէ՛ք յերամաւ և հեզ քաղաք.
Ահա զուարթք ի մէջ կանաչ,
Եւ ասէք ի վարդ ձեզ նման
Ողջամբ ի սոյն հովուաց երգեան.
Զաստուածային սուրբ աւետիք ձեզ
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0012770

Sh. 504.

A II/13551